3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ.

4. Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ.

5. Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ վաթսուն հազար դրամ.

6. Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ.

7. Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար դրամ,

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար դրամ,

դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար դրամ,

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունհինգ հազար դրամ,

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մեկ հարյուր հազար դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար դրամ,

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար դրամ,

դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար դրամ,

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունհինգ հազար դրամ.

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մեկ հարյուր հազար դրամ.

8. Բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

9. Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

1) առևտրի օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ,

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ հիսուն հազար դրամ,

3) բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազար դրամ,

4) խաղատների համար՝ հինգ հարյուր հազար դրամ,

5) շահումով խաղերի համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ,

6) վիճակախաղերի համար՝ հարյուր հազար դրամ.

10. Համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

1) հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասը հազար դրամ,

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար դրամ,

դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսան հազար դրամ,

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեսուն հազար դրամ,

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հիսուն հազար դրամ.

2) ոչ հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մեկ հազար դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար դրամ,

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հազար դրամ,

դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ութ հազար դրամ,

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար դրամ,

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսանհինգ հազար դրամ.

11. Ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ Երևան քաղաքի և միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար դրամ,

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար հինգ հարյուր դրամ,

3) սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

4) այլ արտաքին գովազդի համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,

5) դատարկ գովազդային վահանակների համար՝ երեք հարյուր յոթանասունհինգ դրամ,

6) եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ մեկ հարյուր հիսուն դրամ.

12. Համայնքի խորհրդանիշը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ մեկ հարյուր հազար դրամ.

13. Համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ տասը հազար դրամ.

14. Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հինգ հարյուր հազար դրամ.

15. Համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

1) 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ,

2) 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ հինգ միլիոն դրամ,

3) 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ յոթ միլիոն դրամ,

4) 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ տասը միլիոն դրամ:

16. Համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար օրացուցային տարվա համար հիսուն հազար դրամ:

17. Համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար՝

1) կարատեի, դիսկոտեկի, բաղնիքի, սաունայի և շոգեբաղնիքի համար օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում տաս հազար դրամ

2) հեստպարային ակումբի համար օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում մեկ հարյուր հազար դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ N 2
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 03-Ի ԹԻՎ 107-Ն ՈՐՈՇՄԱՆ

## Տեղական վճարների դրույքաչափեր

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքում (այսուհետ՝ համայնք) սահմանվում են տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը.

1. Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ տաս հազար դրամ

2. Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ տաս հազար դրամ

3. Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ տաս հազար դրամ

4. Համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար դրամ

5. Համայնքի կողմից կազմակերպվող աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5000 հազար դրամ, իսկ մրցույթների մասնակցության համար՝ երկու հազար դրամ:

6. Համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ զրո դրամ

7. Համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը սահմանվում է՝

1) Բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում կոշտ կենցաղային թափոնների համար աղբահանության վճարը սահմանվում է՝

ա. ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական մեկ հարյուր Հայաստանի Հանրապետության դրամ:

2) Ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում, այդ թվում՝ հասարակական և արտադրական շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով.

ա. առևտրի (այդ թվում՝ շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացնող շինությունների մասով մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ հիսուն Հայաստանի Հանրապետության դրամ.

բ. հյուրանոցների և հյուրանոցային տնտեսության ծառայություններ, ինչպես նաև այլ գործունեություն իրականացնող հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ քսան Հայաստանի Հանրապետության դրամ.

գ. արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ հինգ Հայաստանի Հանրապետության դրամ.

դ. կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ երեք Հայաստանի Հանրապետության դրամ.

ե. շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված տնտեսական գործունեություն, աղբահանության վճարն ամբողջությամբ հաշվարկվում է տնտեսական գործունեության համար սահմանված առավել բարձր դրույքաչափով:

3) Ոչ կենցաղային աղբի համար աղբահանության վճարը սահմանվում է՝

ա. ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ երեք հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

բ. ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ տասը հազար Հայաստանի Հանրապետության դրամ:

8. Համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճարը համայնքի ավագանին սահմանում է երկու հազար Հայաստանի Հանրապետության դրամ.

9. Կենտրոնացված ջեռուցման համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով՝ զրո դրամ, բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն սահմանված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում սակագների սահմանման դեպքերի.

10. Ջրմուղ-կոյուղու համար այն համայնքներում, որոնք ներառված չեն ջրմուղ-կոյուղու ծառայություններ մատուցող օպերատոր կազմակերպությունների սպասարկման տարածքներում, մասնավորապես ջրամատակարարման և ջրահեռացման վճարներ՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով՝ զրո դրամ, բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն սահմանված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում սակագների սահմանման դեպքերի.

11. Ոռոգման ջրի մատակարարման համար այն համայնքներում, որոնք ներառված չեն «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ստեղծված ջրօգտագործողների ընկերությունների սպասարկման տարածքներում՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով՝ զրո դրամ, բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն սահմանված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում սակագների սահմանման դեպքերի.

12. Համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով՝ հինգ հարյուր դրամ

13. Համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով՝ մեկ երեխայի համար՝

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի <<Ռոմի Բարոնյանի անվան մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության սաների վարձը՝ ամսեկան վեց հազար դրամ:

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Սառնաղբյուր բնակավայրի համայնքային ոչ առևտրային կազմակերպության սաների վարձը՝ ամսեկան հինգ հազար դրամ:

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Լանջիկ բնակավայրի համայնքային ոչ առևտրային կազմակերպության սաների վարձը՝ ամսեկան չորս հազար դրամ:

14. Համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով՝ մեկ երեխայի համար՝

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի երաժշտական դպրոցի աշակերտների ուսման վարձը՝ ամսական երեք հազար դրամ, երկու բաժնում սովորելու դեպքում՝ մեկ բաժնի վարձը զեղչել 50 %-ով:

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի արվեստի դպրոց.

ա. կերպարվեստ՝ մեկ հազար դրամ,

բ. ասեղնագործության և ֆուրշետ՝ մեկ հազար դրամ,

գ. Ազգագրական և ազատ ոճի պարեր՝ մեկ հազար դրամ,

դ. ազգագրական երգ՝ հինգ հարյուր դրամ,

ե. դեկորատիվ կարատեսակ՝ մեկ հազար դրամ,

զ. Հագուստի մոդելավորում՝ մեկ հազար դրամ,

է. ամունք՝ հինգ հարյուր դրամ.

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի «Մշակութային երիտասարդական կենտրոն».

ա. տիկնիկային թատրոն՝ մեկ հազար դրամ,

բ. ազգային պարեր՝ մեկ հազար դրամ,

գ. կերպարվեստ` հինգ հարյուր դրամ

դ. վոկալ ազգագրական երգչախումբ` հինգ հարյուր դրամ

ե. սամունք` հինգ հարյուր դրամ:

15. Համայնքի վարչական տարածքում, սակայն համայնքի բնակավայրերից դուրս գտնվող՝ ավագանու որոշմամբ հանրային հանգստի վայր սահմանված և համայնքի կողմից կամ համայնքի պատվերով որպես հանրային հանգստի վայր կահավորված տարածքում ընտանեկան կամ գործնական միջոցառումներ անցկացնելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ զրո դրամ

16. Համայնքային սեփականություն հանդիսացող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և համայնքային ենթակայության թանգարանների մուտքի համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով՝ զրո դրամ

17.Համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում (բացառությամբ բակային տարածքների, ուսումնական, կրթական, մշակութային և առողջապահական հաստատությունների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերի հարակից տարածքների) ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար տեղական տուրքը սահմանվում է.

1) յուրաքանչյուր մեկ ժամվա համար` երկու հարյուր դրամ.

2) յուրաքանչյուր մեկ օրվա համար` մեկ հազար հինգ հարյուր դրամ.

3) մեկ շաբաթվա համար` չորս հազար դրամ.

4) մեկ ամսվա համար` քսան հազար դրամ.

5) մեկ տարվա համար` ութսուն հազար դրամ .

18. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ մեկ հազար դրամ փոխհատուցման վճար:

19. Համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց տեղական վճարի դրույքաչափ փոխհատուցման գումարի չափով հինգ հազար դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

## ՈՐՈՇՈՒՄ N 108-Ն

03 դեկտեմբերի 2021 թվական

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՎԱՐՁԱԿԱԼԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի ԹԻՎ 98-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով.

<u>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին</u>
<u>որոշում է՝</u>

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականություն հանդիսացող շենքերի և տարածքների 2022 թվականի համար վարձակալական վճարի չափ սահմանել յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար ամսեկան 400 (չորս հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ:

2.Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 11-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականություն հանդիսացող շենքերի և տարածքների 2021 թվականի համար վարձակալական վճարի չափ սահմանելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 84-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 98-Ն որոշումը:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| | Կողմ՝ ... 9 | Դեմ՝ ... 0 | Ձեռնպահ՝ ... 0 |
|---|---|---|---|
| Ն. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ | ------------------ | ------------------ | ------------ |
| Ա. ԱՐՍԵՆՅԱՆ | ------------------ | ------------------ | ------------ |
| Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ | ------------------ | ------------------ | ------------ |
| Կ.ՀՈՎՍԵՓՅԱՆ | ------------------ | ------------------ | ------------ |
| Մ.ՂԱԶԱՐՅԱՆ | ------------------ | ------------------ | ------------ |
| Գ.ՂԶՐՈՅԱՆ | ------------------ | ------------------ | ------------ |
| Բ.ՄԵԼԻՔՅԱՆ | ------------------ | ------------------ | ------------ |
| Ա.ՆԱԶԱՐՅԱՆ | ------------------ | ------------------ | ------------ |
| Ա. ՆԻԿՈՅԱՆ | ------------------ | ------------------ | ------------ |
| Ա.ՈՒՌՈՒՄՅԱՆ | ------------------ | ------------------ | ------------ |
| Վ.ՍԱՀԱԿՅԱՆ | ------------------ | ------------------ | ------------ |
| Ա. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ | ------------------ | ------------------ | ------------ |
| Զ.ՍԱՐԳՍՅԱՆ | ------------------ | ------------------ | ------------ |
| Ա.ՎԱՐՈՍՅԱՆ | ------------------ | ------------------ | ------------ |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021 թվականի դեկտեմբերի 03

Քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

# ՈՐՈՇՈՒՄ N 109

03 դեկտեմբերի 2021 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ <<ԼԱՆՋԻԿԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 13-Ի N 83 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, 28-րդ կետի , <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի <<Լանջիկի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության շենքի կառուցման և գույքավորման գործում շվեցարացի բարերար Ջիուզեպպե Պինո Չիաչիոյի կողմից կատարված ներդրումները, ինչպես նաև հաշվի առնելով կազմակերպության կոլեկտիվի և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի առաջարկությունները.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին

որոշում է

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի <<Լանջիկի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Լանջիկի <<Ջիուզեպպե Պինո Չիաչիոյի անվան մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2021 թվականի օգոստոսի 13-ի << Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի

<<Լանջիկի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու և << Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Լանջիկի համայնքի ավագանու 2011 թվականի ապրիլի 4-ի N 6 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> N 83 որոշման թիվ 2 կետով հաստատված կանոնադրության մեջ անվանումը շարադրել հետևյալ խմբագրությամբ .

**1/ Հայերեն**՝- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Լանջիկի <<Ջիուզեպպե Պինո Չիաչիոյի անվան մանկապարտեզ >> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:

**2/ Ռուսերեն**-՝ ,,Ланджикский детский сад имени Джузеппе Пино Чачио "общинная некоммерческая организация Анийской общины Ширакской области Республики Армения.

**3/ Անգլերեն** ՝-«Republic of Armenia Shirak Region Ani community Lanjik Giuzeppe Pino Ciaccio kindergarten » community non-profit organization.

4/ Հասցեն կարդալ հետևյալ խմբագրությամբ՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Անի համայնք, գյուղ Լանջիկ, 1-ին փողոց 31/5 մանկապարտեզ:

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Լանջիկի <<Ջիուզեպպե Պինո Չիաչիոյի անվան մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ մինչև բյուջետային տարվա ավարտը համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության Գյումրիի տարածքային բաժին և պետական ռեգիստրի վկայականում կատարել համապատասխան փոփոխություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| | Կողմ՝ ... 9 | Դեմ՝ ... 0 | Ձեռնպահ՝ ... 0 |
|---|---|---|---|
| Ն. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ | ---------------------- | ---------------------- | ------------- |
| Ա. ԱՐՍԵՆՅԱՆ | ---------------------- | ---------------------- | ------------- |
| Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ | ---------------------- | ---------------------- | ------------- |
| Կ.ՀՈՎՍԵՓՅԱՆ | ---------------------- | ---------------------- | ------------- |
| Մ.ՂԱԶԱՐՅԱՆ | ---------------------- | ---------------------- | ------------- |
| Գ.ՂԶՐՈՅԱՆ | ---------------------- | ---------------------- | ------------- |
| Բ.ՄԵԼԻՔՅԱՆ | ---------------------- | ---------------------- | ------------- |
| Ա.ՆԱԶԱՐՅԱՆ | ---------------------- | ---------------------- | ------------- |
| Ա. ՆԻԿՈՅԱՆ | ---------------------- | ---------------------- | ------------- |
| Ա.ՈՒՌՈՒՍՅԱՆ | ---------------------- | ---------------------- | ------------- |
| Վ.ՍԱՀԱԿՅԱՆ | ---------------------- | ---------------------- | ------------- |
| Ա. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ | ---------------------- | ---------------------- | ------------- |
| Ջ.ՍԱՐԳՍՅԱՆ | ---------------------- | ---------------------- | ------------- |
| Ա.ՎԱՐՈՍՅԱՆ | ---------------------- | ---------------------- | ------------- |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021 թվականի դեկտեմբերի 03

Քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

**ՈՐՈՇՈՒՄ N 110**

03 դեկտեմբերի 2021 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿ ՀԱՃԱԽՈՂ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔԻ ԵՐԵԽԱՅԻՆ ԾՆՈՂԻ ԿԱՄ ՆՐԱ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ՎՃԱՐՈՒՄԻՑ ԶԵՂՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի երաժշտական դպրոցի տնօրենի դիմումը, նկատի ունենալով հաճախող երեխայի սոցիալական վիճակը և ելնելով մատաղ սերնդի գեղագիտական դաստիարակության զարգացման շահերից, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի դրույթով.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի երաժշտական դպրոց հաճախող ծնողի կամ նրա ներկայացուցչի վճարումից զեղչվող երեխայի ցանկը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| | Կողմ՝ ...9 | Դեմ՝ ... 0 | Ձեռնպահ՝ ... 0 |
|---|---|---|---|
| Ն. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ | | | |
| Ա. ԱՐՍԵՆՅԱՆ | բացակա | | |
| Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ | | | |
| Կ.ՀՈՎՍԵՓՅԱՆ | | | |
| Մ.ՂԱԶԱՐՅԱՆ | | | |
| Գ.ՂԶՐՈՅԱՆ | | | |
| Բ.ՄԵԼԻՔՅԱՆ | բացակա | | |
| Ա.ՆԱԶԱՐՅԱՆ | | | |
| Ա. ՆԻԿՈՅԱՆ | | | |
| Ա.ՌԻՌՈՒՄՅԱՆ | | | |
| Վ.ՍԱՀԱԿՅԱՆ | | | |
| Ա. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ | բացակա | | |
| Զ.ՍԱՐԳՍՅԱՆ | բացակա | | |
| Ա.ՎԱՐՈՍՅԱՆ | բացակա | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021 թվականի դեկտեմբերի 03

Քաղաք Մարալիկ

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 03-Ի ԹԻՎ 110 ՈՐՈՇՄԱՆ

# ՑԱՆԿ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՀԱՃԱԽՈՂ ԾՆՈՂԻ ԿԱՄ ՆՐԱ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ՎՃԱՐՈՒՄԻՑ ԶԵՂՉՎՈՂ ԵՐԵԽԱՅԻ

| Հ/Հ | Անուն, ազգանուն | Սոցիալական վիճակը | |
|---|---|---|---|
| 1. | Նաիրա Դավթյան | Ընտանիքից 2 երեխա | 50 % |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

# ՈՐՈՇՈՒՄ N 111

03 դեկտեմբերի 2021 թվական

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱԳՐԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ «ՍՈԼԱՐ ՍԹԱՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 08-022-0159-0002 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 10.0 ՀԵԿՏԱՐ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, 5-ՐԴ ԿԱՐԳԻ ԱՐՈՏ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունիսի 17-ի N 987-Ն որոշմամբ հաստատված «Գյուղատնտեսական նշանակության հողերը ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի փոխադրման դեպքերի» 1-ին կետի 14-րդ ենթակետը և հաշվի առնելով «ՍՈԼԱՐ ՍԹԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության /հետագայում՝ Ընկերություն/ գործադիր տնօրենի 2021 թվականի հոկտեմբերի 29-ի դիմումը՝ Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող հողամասում արևային էլեկտրակայան կառուցելու համար հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխելու վերաբերյալ.

<u>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին</u>
<u>որոշում է.</u>

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Բագրավան բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկին, որով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի վարչական սահմաններում գտնվող (բնակավայր Բագրավան) «ՍՈԼԱՐ ՍԹԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սեփականության իրավունքով պատկանող 08-022-0159-0002 կադաստրային ծածկագրով 10.0 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, 5-րդ կարգի արոտ հողատեսքի հողամասը փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա, էներգետիկայի գործառնական նշանակություն, այդ հողամասում արևային էլեկտրակայան կառուցելու համար:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյանին.

Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ Անի համայնքի Բագրավան բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմել համապատասխան հողաշինարարական գործ և ներկայացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| | Կողմ ... 9 | Դեմ ... 0 | Ձեռնպահ ... 0 |
|---|---|---|---|
| Ն. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ | | | |
| Ա. ԱՐՄԵՆՅԱՆ | | | |
| Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ | | | |
| Կ.ՀՈՎՍԵՓՅԱՆ | | | |
| Մ.ՂԱԶԱՐՅԱՆ | | | |
| Գ.ՂԶՐՈՅԱՆ | | | |
| Բ.ՄԵԼԻՔՅԱՆ | | | |
| Ա.ՆԱԶԱՐՅԱՆ | | | |
| Ա. ՆԻԿՈՅԱՆ | | | |
| Ա.ՈՒՌՈՒՄՅԱՆ | | | |
| Վ.ՍԱՀԱԿՅԱՆ | | | |
| Ա. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ | | | |
| Ջ.ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| Ա.ՎԱՐՈՍՅԱՆ | | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021 թվականի դեկտեմբերի 03

Քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի, Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, քաղաքՄարալիկ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ն **112**
03 դեկտեմբերի 2021 թվական

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի, Հայկաձոր, Իսահակյան, Ձորակապ, Սարակապ, Սառնաղբյուր, Ջիթհանքով, Անիավան և Քարաբերդ բնակավայրերի բնակիչների դիմումները, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 24-ի թիվ 9 որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի դրույթները.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին
որոշում է

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2021 թվականի բյուջեի գործառական դասակարգման բաժին 10, խումբ 07, դաս 01 (սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) և տնտեսագիտական դասակարգման 4729 (այլ նպաստներ բյուջեից) հոդվածից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի, Հայկաձոր, Իսահակյան, Ձորակապ, Սարակապ, Սառնաղբյուր, Ջիթհանքով, Անիավան և Քարաբերդ բնակավայրերի ներքոհիշյալ բնակիչներին հատկացնել 740000 /յոթ հարյուր քառասուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամի չափով՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| | Կողմ՝ ...9 | Դեմ՝ ...0 | Ձեռնպահ՝ ...0 |
|---|---|---|---|
| Ն. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ | ---------------------- | ---------------------- | ------------- |
| Ա. ԱՐՄԵՆՅԱՆ | ---------------------- | ---------------------- | ------------- |
| Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ | ---------------------- | ---------------------- | ------------- |
| Կ.ՀՈՎՍԵՓՅԱՆ | ---------------------- | ---------------------- | ------------- |
| Մ.ՂԱԶԱՐՅԱՆ | ---------------------- | ---------------------- | ---------- |
| Գ.ՂԶՐՈՅԱՆ | ---------------------- | ---------------------- | ---------- |
| Բ.ՄԵԼԻՔՅԱՆ | ---------------------- | ---------------------- | ---------- |
| Ա.ՆԱԶԱՐՅԱՆ | ---------------------- | ---------------------- | ---------- |
| Ա. ՆԻԿՈՅԱՆ | ---------------------- | ---------------------- | ------------- |
| Ա.ՈՒՌՈՒՄՅԱՆ | ---------------------- | ---------------------- | ---------- |
| Վ.ՍԱՀԱԿՅԱՆ | ---------------------- | ---------------------- | ---------- |
| Ա. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ | ---------------------- | ---------------------- | ---------- |
| Զ.ՍԱՐԳՍՅԱՆ | ---------------------- | ---------------------- | ------------ |
| Ա.ՎԱՐՈՍՅԱՆ | ---------------------- | ---------------------- | ---------- |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021 թվականի դեկտեմբերի 03

Քաղաք Մարալիկ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 03-Ի ԹԻՎ 112 ՈՐՈՇՄԱՆ

ՑՈՒՑԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

| ՀՀ | Անուն, ազգանուն | Հայաստանի Հանրապետության դրամ |
|---|---|---|
| 1. | Գրիշա Հովհաննիսյան /Հայկաձոր/ | 50000 / հիսուն հազար/ դրամ |
| 2. | Ժորիկ Ղասոյան /Իսահակյան/ | 50000 / հիսուն հազար/ դրամ |
| 3. | Ռաֆայել Դարմոյան /Քարաբերդ/ | 50000 / հիսուն հազար/ դրամ |
| 4. | Արմեն Պողոսյան/Մարալիկ/ | 50000 / հիսուն հազար/ դրամ |
| 5. | Աննա Հարությունյան /Մարալիկ/ | 30000 / երեսուն հազար/ դրամ |
| 6. | Նազելի Մուրադյան/Մարալիկ/ | 50000 /հիսուն հազար/ դրամ |
| 7. | Դավիթ Հակոբյան /Մարալիկ/ | 60000 / վաթսուն հազար/ դրամ |
| 8. | Կարապետ Դավթյան / Սառնաղբյուր/ | 90000 / իննսուն հազար/ դրամ |
| 9. | Մեսրոբ Ասլանյան /Սառնաղբյուր/ | 80000 / ութսուն հազար/ դրամ |
| 10. | Ռոբերտ Մարդոյան /Սառնաղբյուր/ | 30000 / երեսուն հազար/ դրամ |
| 11. | Գայանե Ալեքսիսյան /Սարակապ/ | 50000 / հիսուն հազար/ դրամ |
| 12. | Նաիրի Խաչատրյան /Ձորակապ/ | 50000 / հիսուն հազար/ դրամ |
| 13. | Վաղինակ Պետրոսյան /Ձիթհանքով/ | 50000 /հիսուն հազար/ դրամ |
| 14. | Միեր Տոնոյան /Անիավան/ | 50000 /հիսուն հազար/ դրամ |
| | Ընդամենը | 740000 /յոթ հարյուր քառասուն հազար/ դրամ |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

# ՈՐՈՇՈՒՄ N 113

03 դեկտեմբերի 2021 թվական

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻՑ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԶՈՀՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքից 2020 թվականի Արցախյան պատերազմին զոհված զինծառայողների ընտանիքների անդամների դիմումները, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 24-ի թիվ 9 որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետի 1-ին ենթակետի դրույթները, համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու անդամների առաջարկությունները.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին
որոշում է

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2020 թվականի բյուջեի գործառական դասակարգման բաժին 10, խումբ 07, դաս 01 (սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) և տնտեսագիտական դասակարգման 4729 (այլ նպաստներ բյուջեից) հոդվածից 2100000 /երկու միլիոն մեկ հարյուր հազար/ հատկացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ներքոհիշյալ բնակիչներին՝ համաձայն հավելվածի։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| | Կողմ՝ ... 9 | Դեմ՝ ... 0 | Ձեռնպահ՝ ... 0 |
|---|---|---|---|
| Ն. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ | | | |
| Ա. ԱՐՍԵՆՅԱՆ | | | |
| Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ | | | |
| Կ.ՀՈՎՍԵՓՅԱՆ | | | |
| Մ.ՂԱԶԱՐՅԱՆ | | | |
| Գ.ՂԶՐՈՅԱՆ | | | |
| Բ.ՄԵԼԻՔՅԱՆ | | | |
| Ա.ՆԱԶԱՐՅԱՆ | | | |
| Ա. ՆԻԿՈՅԱՆ | | | |
| Ա.ՈՒՌՈՒՄՅԱՆ | | | |
| Վ.ՍԱՀԱԿՅԱՆ | | | |
| Ա. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ | | | |
| Զ.ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| Ա.ՎԱՐՈՍՅԱՆ | | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021 թվականի դեկտեմբերի 03

Քաղաք Մարալիկ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 03-Ի ԹԻՎ 113 ՈՐՈՇՄԱՆ

ՑՈՒՑԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻՑ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԶՈՀՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ

| ՀՀ | Անուն, ազգանուն | Հայաստանի Հանրապետության դրամ |
|---|---|---|
| 1. | Ղուրշուդյան Էդվարդ /Մարալիկ/ | 100000 /մեկ հարյուր հազար/ |
| 2. | Արշակ Աստոյան /Մարալիկ/ | 100000 /մեկ հարյուր հազար/ |
| 3. | Կարինե Մարգարյան /Մարալիկ/ | 100000 /մեկ հարյուր հազար/ |
| 4. | Արտավազդ Աստոյան /Հայկաձոր/ | 100000 /մեկ հարյուր հազար/ |
| 5. | Եսայի Գևորգյան /Ջիթհանքով/ | 100000 /մեկ հարյուր հազար/ |
| 6. | Օնիկ Ափոյան /Խաշհակյան/ | 100000 /մեկ հարյուր հազար/ |
| 7. | Վազգեն Արսենյան /Խաշհակյան/ | 100000 /մեկ հարյուր հազար/ |
| 8. | Գագիկ Սահակյան /Գուսանագյուղ/ | 100000 /մեկ հարյուր հազար/ |
| 9. | Սևադա Սաղաթելյան /Ձորակապ/ | 100000 /մեկ հարյուր հազար/ |
| 10. | Ռաֆիկ Գալստյան /Ձորակապ/ | 100000 /մեկ հարյուր հազար/ |
| 11. | Համլետ Սաղաթելյան /Ձորակապ/ | 100000 /մեկ հարյուր հազար/ |
| 12. | Արմեն Գասպարյան /Սառնաղբյուր/ | 100000 /մեկ հարյուր հազար/ |
| 13. | Թամարա Ավեյան /Սառնաղբյուր/ | 100000 /մեկ հարյուր հազար/ |
| 14. | Ռուզվելտ Պետրոսյան /Ջրափի/ | 100000 /մեկ հարյուր հազար/ |
| 15. | Ալմաստ Հարությունյան /Մարալիկ/ | 100000 /մեկ հարյուր հազար/ |
| 16. | Սերոբ Գրիգորյան /Սառնաղբյուր/ | 100000 /մեկ հարյուր հազար/ |
| 17. | Արաքսյա Կոստանյան /Քարաբերդ/ | 100000 /մեկ հարյուր հազար/ |
| 18. | Աբել Պետրոսյան /Ջիթհանքով/ | 100000 /մեկ հարյուր հազար/ |
| 19. | Տիրուհի Հարությունյան / Գուսանագյուղ/ | 100000 /մեկ հարյուր հազար/ |
| 20. | Սարգիս Պողոսյան /Լանջիկ/ | 100000 /մեկ հարյուր հազար/ |

| | | |
|---|---|---|
| 21. | Մանուկ Խաչատրյան/Սառնաղբյուր/ | 100000 /մեկ հարյուր հազար/ |
| | Ընդամենը | 2100 000/երկու միլիոն մեկ հարյուր հազար/ |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի, Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, քաղաքՄարալիկ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 114
03 դեկտեմբերի 2021 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԱՏԵԻ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ԳԱՎԱԹԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԱԾ ՄԱՐՄՆԱՄԱՐԶԻԿՆԵՐԻՆ ԵՎ ՄԱՐԶԻՉԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԽՐԱԽՈՒՍԱՆՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի դրույթներով.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին
որոշում է

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի բյուջեի գործառական դասակարգման բաժին 10, խումբ 07, դաս 01 (սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) և 4727 (կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից) հոդվածից 250000 /երկու հարյուր հիսուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ Հայաստանի Հանրապետության կարատեի ազգային կոնֆեդերացիայի գավաթի առաջնությանը մասնակցած մարմնամարզիկներին և մարզիչին հատկացնել գումար՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| | Կողմ՝ ... 9 | Դեմ՝ ... 0 | Ձեռնպահ՝ ...0 |
|---|---|---|---|
| Ն. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ | ---------------------------- | ---------------------------- | ---------------- |
| Ա. ԱՐՍԵՆՅԱՆ | բացակա | ---------------------------- | ----------------- |
| Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ | ---------------------------- | ---------------------------- | ---------------- |
| Կ.ՀՈՎՍԵՓՅԱՆ | ---------------------------- | ---------------------------- | -------------- |
| Մ.ՂԱԶԱՐՅԱՆ | ---------------------------- | ---------------------------- | ------------- |
| Գ.ՂԶՐՈՅԱՆ | ---------------------------- | ---------------------------- | ------------- |
| Բ.ՄԵԼԻՔՅԱՆ | բացակա | ---------------------------- | -------------- |
| Ա.ՆԱԶԱՐՅԱՆ | ---------------------------- | ---------------------------- | -------------- |
| Ա. ՆԻԿՈՅԱՆ | ---------------------------- | ---------------------------- | ---------------- |
| Ա.ՌԻՌՈՒՄՅԱՆ | ---------------------------- | ---------------------------- | ------------- |
| Վ.ՍԱՀԱԿՅԱՆ | ---------------------------- | ---------------------------- | --------------- |
| Ա. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ | բացակա | ---------------------------- | -------------- |
| Զ.ՍԱՐԳՍՅԱՆ | բացակա | ---------------------------- | --------------- |
| Ա.ՎԱՐՈՍՅԱՆ | բացակա | ---------------------------- | -------------- |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021 թվականի դեկտեմբերի 03

Քաղաք Մարալիկ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 03-Ի ԹԻՎ 114 ՈՐՈՇՄԱՆ

ՑԱՆԿ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԱՏԵԻ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ԳԱՎԱԹԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԱԾ ՄԱՐՄՆԱՄԱՐԶԻԿՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻՆ ԵՎ ՄԱՐԶԻՉԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԽՐԱԽՈՒՍԱՆՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

| Հ/Հ | Անուն Ազգանուն | Բնակավայր | Մարմնամարզիկի գրաված մրցանակային տեղ | Գումարի չափը |
|---|---|---|---|---|
| 1. | Սուսաննա Հարությունյան | Մարալիկ | 1-ին | 60000 /վաթսուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ |
| 2. | Մերի Մելքոնյան | Ջրափի | 3-րդ | 40000 /քառասուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ |
| 3. | Արսեն Բրուտյան | Մարալիկ | 3-րդ | 40000 /քառասուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ |
| 4. | Էդգար Սարգսյան | Ջրափի | 3-րդ | 40000 /քառասուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ |
| 5. | Ժիրայր Մինասյան | | Մարզիչ | 70000 /յոթանասուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ |
| | Ընդամենը | | | 250000 /երկու հարյուր հիսուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

ՈՐՈՇՈՒՄ N 115
03 դեկտեմբերի 2021 թվական

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի առաջարկությունները.

<u>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է</u>

1. Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի այն բնակավայրերի վարչական ղեկավարները, ովքեր կհավաքագրեն և կապահովեն հողի հարկի և հողի վարձակալական վճարի 50 և ավել % պլանային ցուցանիշները, կվարձատրվեն Անի համայնքի ավագանու կողմից հաստատված հաստիքացուցակի համաձայն, իսկ այն բնակավայրերի վարչական ղեկավարները, ովքեր չեն կարող հավաքագրել և ապահովել հողի հարկի և հողի վարձակալական վճարի մինչև 50 % շեմը, առաջարկվում է.

1/նրանց հետ կնքել քաղաքացիաիրավական պայմանագիր և աշխատավարձը սահմանել ավագանու որոշմամբ սահմանված աշխատավարձի 50 % չափով՝ հիմք ընդունելով եռամսյակային ու տարեկան ցուցանիշները.

2/լուծել նրանց հետ կնքված ժամկետային աշխատանքային պայմանագրերը.

3/նպաստել հողի հարկի և հողի վարձակալական վճարի գանձմանը՝ զտնելով այլ լուծում:

2. Ամսական ցուցանիշ ապահովելու դեպքում վարչական ղեկավարներին խրախուսել պարգևատրման տեսքով:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| | Կողմ՝ ...9 | Դեմ՝ ... 0 | Ձեռնպահ՝ ... 0 |
|---|---|---|---|
| Ն. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ | ------------------------ | ------------------------ | ------------- |
| Ա. ԱՐՍԵՆՅԱՆ | ------------------------ | ------------------------ | ------------- |
| Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ | ------------------------ | ------------------------ | ------------- |
| Կ.ՀՈՎՍԵՓՅԱՆ | ------------------------ | ------------------------ | ----------- |
| Մ.ՂԱԶԱՐՅԱՆ | ------------------------ | ------------------------ | ---------- |
| Գ.ՂԶՐՈՅԱՆ | ------------------------ | ------------------------ | ---------- |
| Բ.ՄԵԼԻՔՅԱՆ | ------------------------ | ------------------------ | ----------- |
| Ա.ՆԱԶԱՐՅԱՆ | ------------------------ | ------------------------ | ----------- |
| Ա. ՆԻԿՈՅԱՆ | ------------------------ | ------------------------ | ------------- |
| Ա.ՌՈՒՌՈՒՄՅԱՆ | ------------------------ | ------------------------ | ---------- |
| Վ.ՍԱՀԱԿՅԱՆ | ------------------------ | ------------------------ | ----------- |
| Ա. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ | ------------------------ | ------------------------ | ----------- |
| Զ.ՍԱՐԳՍՅԱՆ | ------------------------ | ------------------------ | ------------ |
| Ա.ՎԱՐՈՍՅԱՆ | ------------------------ | ------------------------ | ----------- |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021 թվականի դեկտեմբերի 03

Քաղաք Մարալիկ